ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 02.03.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/21

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ)՝ քննելով Հովհաննես Դանիելյանի 09.02.2018թ. բողոքը և Վյաչեսլավ Ամիրջանյան Ա/Ձ-ի 23.02.2018թ. համանման բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2018/21 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. <u>Հովհաննես Դանիելյանի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>

Հովհաննես Դանիելյանը 09.02.2018թ. Խորհրդին ներկայացված բողոքով հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարությունը իր կարիքների համար ս/թ. հունվարի 12-ին հայտարարել է սննդամթերքի ձեռքբերման նպատակով գնանշման հարցման ընթացակարգ: Ընթացակարգի հայտերի բացման օր է սահմանվել 24.01.2018թ.-ը:

Հայտեր են ներկայացրել Աբգար Ավետիսյան Ա/Ձ-ն, Վյաչեսլավ Ամիրջանյան Ա/Ձ-ն, «Բլաժ» ՍՊԸ-ն/ կոնսորցիում «ՍԱՄ-ՀԱՐ» ՍՊԸ-ի հետ, Արման Սվազյան Ա/Ձ-ն/ կոնսորցիում «ՔՍԻԱՄԵՆ ՕՐԳԱՆԻԿ ՖՈՒԴ ԿՈ» ՍՊԸ-ի հետ, «Ստանդարտ-2014» ՍՊԸ-ն/ կոնսորցիում «ՄՍ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ» ՍՊԸ-ի հետ:

Արման Սվազյան Ա/Ձ-ն/ կոնսորցիում «ՔՍԻԱՄԵՆ ՕՐԳԱՆԻԿ ՖՈՒԴ ԿՈ» ՍՊԸ-ի հետ հայտի թիվ 5 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ չափաբաժիններով, համապատասխանաբար՝ 18 995 000 ՀՀ դրամ, 5 790 000 ՀՀ դրամ, 3 000 840 ՀՀ դրամ, 5 195 000 ՀՀ դրամ, 5 790 000 ՀՀ դրամ, 3 000 840 ՀՀ դրամ, 5 195 000 ՀՀ դրամ, որի ընդհանուր գինը կազմել է 46 966 680 ՀՀ դրամ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.01.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ չափաբաժիններով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել Արման Սվազյան Ա/Ձ-ն/ կոնսորցիում «ՔՍԻԱՄԵՆ ՕՐԳԱՆԻԿ ՖՈՒԴ ԿՈ» ՍՊԸ-ի հետ:

Հովհաննես Դանիելյանի կողմից որպես բողոքի իրավական հիմք նշվել է Ընթացակարգի հրավերի ՄԱՍ 1-ի 7-րդ կետի 7.1 ենթակետը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասը (այսուհետ՝ Օրենք), Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը և Կարգի 41-րդ կետը:

Հովհաննես Դանիելյանը ներկայացված բողոքով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին խնդրել է՝

1. Կիրառել ժամանակավոր միջոց և կասեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/12» ծածկագրով ընթացակարգի արդյունքում «ԱՐՄԱՆ ՍՎԱԶՅԱՆ» Ա/Ձ /կոնսորցիում «ՔՍԻԱՄԵՆ ՕՐԳԱՆԻԿ ՖՈՒԴ ԿՈ» ՍՊԸ-ի հետ/ որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերի տրամադրման գործընթացը և պայմանագրի կնքման գործընթացը:

2. Չեղյալ համարել ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար «Սննդամթերքի» ձեռքբերման գնանշման հարցման «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/12» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի 24.01.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 Արձանագրության 4-րդ կետով կայացված որոշումը՝ «ԱՐՄԱՆ ՍՎԱԶՅԱՆ» Ա/Ձ-ին / կոնսորցիում «ՔՍԻԱՄԵՆ ՕՐԳԱՆԻԿ ՖՈՒԴ ԿՈ» ՍՊԸ/ 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ չափաբաժիններով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելը:

Հովհաննես Դանիելյանը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 14.02.2018թ. ժամը 12:20-ի նիստի վերաբերյալ, չի ապահովել՝ իր մասնակցությունը:

2. <u>Վյաչեսլավ Ամիրջանյան Ա/Ձ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>

Վյաչեսլավ Ամիրջանյան Ա/Ձ-ն 23.02.2018թ. Խորհրդին ներկայացված համանման բողոքով հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Վյաչեսլավ Ամիրջանյան» Ա/Ձ-ն, ինչպես նաև համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) «Արման Սվազյան» Ա/Ձ-ն և «ՔՍԻԱՄԵՆ ԻՆՏԵՐՆԵՅՇՆԼ ԲԱՆԿ ԿՈ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7-րդ կետի 7.1 ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ նույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.01.2018թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 3.1 կետի համաձայն՝ «Արման Սվազյան» Ա/Ձ և «ՔՍԻԱՄԵՆ ԻՆՏԵՐՆԵՅՇՆԼ ԲԱՆԿ ԿՈ» ՍՊԸ կոնսորցիումը ներկայացրել է հետևյալ գնային առաջարկները՝

Չ/Հ	«Արման Սվազյան» Ա/Ձ և «ՔՍԻԱՄԵՆ ԻՆՏԵՐՆԵՅՇՆԼ ԲԱՆԿ ԿՈ» ՍՊԸ կոնսորցիումի ընդհանուր գինը
2	18 995 000
3	5 790 000
4	3 000 840
5	5 195 000
6	5 790 000
7	3 000 840
8	5 195 000

«Արման Սվազյան» Ա/Ձ-ն հայտով որպես հայտի ապահովում ներկայացրել է 24.01.2018թ. վճարման պահանջագիր, որի գումարը կազմել է ***2 500 000 ՀՀ դրամ***:

«Արման Սվազյան» Ա/Ձ-ի հետ կոնսորցիումով մասնակցած «ՔՍԻԱՄԵՆ ԻՆՏԵՐՆԵՅՇՆԼ ԲԱՆԿ ԿՈ» ՍՊԸ-ն 24.01.2018թ. ևս հայտով ներկայացրել է որպես հայտի ապահովում վճարման պահանջագիր, որի գումարը նույնպես կազմել է ***2 500 000 ՀՀ դրամ***:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.01.2018թ. տեղի ունեցած նիստի 2.3 կետի համաձայն՝ «Արման Սվազյան» Ա/Ձ-ի հայտով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.02.2018թ. տեղի ունեցած նիստի 4.1 կետի համաձայն՝ «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգի 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդև 8-րդչափաբաժիններում 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել «Արման Սվազյան» Ա/Ձ-ն:

«Կյաչեսլավ Ամիրջանյան» Ա/Ձ-ի կողմից որպես բողոքի իրավական հիմք նշվել է Ընթացակարգի հրավերի ՄԱՍ 1-ի 7-րդ կետի 7.1 ենթակետը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը և Կարգի 41-րդ կետը:

«Արման Սվազյան» Ա/Ձ և «ՔՍԻԱՄԵՆ ԻՆՏԵՐՆԵՅՇՆԼ ԲԱՆԿ ԿՈ» ՍՊԸ կոնսորցիումի գնային առաջարկը կազմել է 46 966 680 ՀՀ դրամ:

«Արման Սվազյան» Ա/Ձ-ն հայտով որպես հայտի ապահովում ներկայացրել է 24.01.2018թ. վճարման պահանջագիր, որի գումարը կազմել է 2 500 000 ՀՀ դրամ:

«Արման Սվազյան» Ա/Ձ-ի հետ կոնսորցիումով մասնակցած «ՔՍԻԱՄԵՆ ԻՆՏԵՐՆԵՅՇՆԼ ԲԱՆԿ ԿՈ» ՍՊԸ-ն 24.01.2018թ. ևս հայտով ներկայացրել է որպես հայտի ապահովում վճարման պահանջագիր, որի գումարը կազմել է 2 500 000 ՀՀ դրամ:

«Արման Սվազյան» Ա/Ձ և «ՔՍԻԱՄԵՆ ԻՆՏԵՐՆԵՅՇՆԼ ԲԱՆԿ ԿՈ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած ընդհանուր գնային առաջարկը կազմել է 46 966 680 ՀՀ դրամ, որի 5 տոկոսը պետք է կազմեր 2 348 334 ՀՀ դրամ, մինչդեռ որպես հայտի ապահովման գումար նշվել է 2 500 000 ՀՀ դրամը, ինչը ավել է, քան 5 տոկոսը:

Բացի այդ, «Արման Սվազյան» Ա/Ձ և «ՔՍԻԱՄԵՆ ԻՆՏԵՐՆԵՅՇՆԼ ԲԱՆԿ ԿՈ» ՍՊԸ-ի կոնսորցիումի ներկայացրած միասին երկու հայտի ապահովման ընդհանուր գինը կազմել է 46 966 680 ՀՀ դրամ, որի 5 տոկոսը պետք է լինի 2 348 334 ՀՀ դրամ: Այսինքն տվյալ դեպքում «Արման Սվազյան» Ա/Ձ և «ՔՍԻԱՄԵՆ ԻՆՏԵՐՆԵՅՇՆԼ ԲԱՆԿ ԿՈ» ՍՊԸ-ի կոնսորցիումը որպես հայտի ապահովման գումար վճարման պահանջագրերով միասին ներկայացրել է 5 000 000 ՀՀ դրամ, ինչի չափը ոչ թե հավասար է, այլ եռապատիկ գերազանցում է հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսին:

Բացի այդ, «Արման Սվազյան» Ա/Ձ-ի և «ՔՍԻԱՄԵՆ ԻՆՏԵՐՆԵՅՇՆԼ ԲԱՆԿ ԿՈ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացրած վճարման պահանջագրերի մեջ բացակայել է հաշվապահի ստորագրությունը, ինչը ևս հիմք էր «Արման Սվազյան» Ա/Ձ-ի և «ՔՍԻԱՄԵՆ ԻՆՏԵՐՆԵՅՇՆԼ ԲԱՆԿ ԿՈ» ՍՊԸ-ի կոնսորցիումով ներկայացրած հայտը մերժելու:

Ամփոփելով վերոգրյալը, «Վյաչեսլավ Ամիրջանյան» Ա/Ձ-ն հայտնել է, որ ՀՀ ՊՆ-ի կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը «Արման Սվազյան» Ա/Ձ և «ՔՍԻԱՄԵՆ ԻՆՏԵՐՆԵՅՇՆԼ ԲԱՆԿ ԿՈ» ՍՊԸ կոնսորցիումին Ընթացակարգի 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելով՝ խախտել են Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասով, նույն օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով, Կարգ 40-րդ կետի 4-րդ ենթակետով, 41-րդ կետով և Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7-րդ կետի 7.1 ենթակետով սահմանված պահանջները:

«Վյաչեսլավ Ամիրջանյան» Ա/Ձ-ն ներկայացված բողոքով Խորհրդին հայտնել է, նաև որ «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Վյաչեսլավ Ամիրջանյան» Ա/Ձ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.01.2018թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 3.1 կետի համաձայն՝ «Վյաչեսլավ Ամիրջանյան» Ա/Ձ-ն ներկայացրել է հետևյալ գնային առաջարկները՝

Հ/Հ	«Վյաչեսլավ Ամիրջանյան» Ա/Ձ-ի ներկայացրած ընդհանուր գինը
3	5 789 364

4	3 813 000
5	5 166 000
6	5 789 364
7	3 813 000
8	5 166 000

«Վյաչեսլավ Ամիրջանյան» Ա/Ձ-ն հայտով որպես հայտի ապահովում ներկայացրել է 24.01.2018թ. վճարման պահանջագիր, որի գումարը կազմել է ***1 476 836 ՀՀ դրամ***:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.01.2018թ. տեղի ունեցած նիստի 2.3 կետի համաձայն՝ «Վյաչեսլավ Ամիրջանյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտի ապահովման անբաժանելի մաս հանդիսացող վճարման պահանջագրում հայտի ապահովման չափը պակաս է հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսից, բացի այդ՝ տուժանքի մասին համաձայնագրում մասնակցի ՀՎՀՀ-ն սխալ է նշվել, որի հիման վրա էլ հանձնաժողովը մերժել է Ա/Ձ-ի հայտը:

«Վյաչեսլավ Ամիրջանյան» Ա/Ձ-ն հայտով որպես հայտի ապահովում ներկայացրել է վճարման պահանջագիր, որի գումարը կազմել է ***1 476 836 ՀՀ դրամ***, մինչդեռ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հայտի ապահովման գումարը հաշվելիս՝ ստացել է 4 լումա ավելի, այն է 1 476 836,4 ՀՀ դրամ:

Բացի այդ, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը «Վյաչեսլավ Ամիրջանյան» Ա/Ձ-ի հայտը մերժելու հիմքում դրել է նաև այն հանգամանքը, որ «Վյաչեսլավ Ամիրջանյան» Ա/Ձ-ն տուժանքի մասին համաձայնագրում Ա/Ձ-ի ՀՎՀՀ-ն նշել է 475149613, իսկ վճարման պահանջագրի 6-րդ տողում վճարողի ՀՎՀՀ-ն նշել է 45149613 (ճիշտ ՀՎՀՀ): Այսինքն տուժանքի մասին համաձայնագրում «Վյաչեսլավ Ամիրջանյան» Ա/Ձ-ի ՀՎՀՀ-ում մեկ թիվ տեխնիկական վրիպակի պատճառով ավել է նշվել:

Ամփոփելով, «Վյաչեսլավ Ամիրջանյան» Ա/Ձ-ն հայտնել է, որ վերը նշվածը չէր կարող հիմք հանդիսանալ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի համար «Վյաչեսլավ Ամիրջանյան» Ա/Ձ-ի հայտը մերժելու, քանի որ նախ հաշվարկած այդ 4 լուման ոչ մի կերպ չի ազդում «Վյաչեսլավ Ամիրջանյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացրած հայտի ապահովման գումարի վրա և ինչ վերաբերում է տուժանքի մասին համաձայնագրում ՀՎՀՀ-ն սխալ նշելու հանգամանքի, ապա Պատվիրատուի կողմից վճարողի բանկ ներկայացվում է միայն

վճարման պահանջագիրը, ուստի այդ վրիպակը չէր կարող հիմք հանդիսանալ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Վյաչեսլավ Ամիրջանյան» Ա/Ձ-ի հայտը մերժելու:

«Վյաչեսլավ Ամիրջանյան» Ա/Ձ-ն որպես վերը նշվածի իրավական հիմք նշել է Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը, Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետը:

«Վյաչեսլավ Ամիրջանյան» Ա/Ձ-ն ներկայացված բողոքով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին խնդրել է՝

1. Դադարեցնել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.01.2018թ. թիվ 4 արձանագրության 2.3 կետով Վյաչեսլավ Ամիրջանյան Ա/Ձ-ի հայտը մերժելու որոշումը:

2. Դադարեցնել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.01.2018թ. թիվ 4 արձանագրության 4.1 կետով «ԱՐՄԱՆ ՍՎԱՋՅԱՆ» Ա/Ձ-ին ընթացակարգի 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին որոշումը և այդ որոշումից բխող այլ որոշումները:

«Վյաչեսլավ Ամիրջանյան» Ա/Ձ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 27.02.2018թ. ժամը 12:00-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերը նշված համանման բողոքով հայտնած դիրքորոշումը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը Հովհաննես Դանիելյանի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ 14.02.2018թ. թիվ ԴՎԱ/542 գրությամբ հայտնել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.01.2018թ.-ին կայացրած որոշման հիման վրա 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից

ճանաչված «ԱՐՄԱՆ ՍՎԱԶՅԱՆ» Ա/Ձ-ն ներկայացրել է միակողմանի հաստատված հայտարարություն՝ տուժանքի ձևով հայտի ապահովում, որի գումարը գերազանցել է մասնակցի կողմից ներկայացրած գնային առաջարկի 5 տոկոսը:

Ամփոփելով վերոգրյալը, Պատվիրատուն հայտնել է, որ ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալի 13.11.2017թ. 03/27-1/20702-17 գրությամբ ներկայացրած պարզաբանման համաձայն՝ մասնակցի կողմից հայտի ապահովումը առաջարկվող գնի 5 տոկոսից ավելին ներկայացվելու դեպքում, հայտը ենթակա չէ մերժման:

ՀՀ պաշտպանության նախարարությունը Վյաչեսլավ Ամիրջանյան Ա/Ձ-ի կողմից ներկայացված համանման բողոքի վերաբերյալ դիրքորոշում չի ներկայացրել:

ՀՀ պաշտպանության նախարարությունը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 14.02.2018թ. ժամը 12:20-ի և 27.02.2018թ. ժամը 12:00-ի նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ԳԲԽ-ԱՄ-2018/21 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ԳԲԽ-ԱՄ-2018/21 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտեր են ներկայացրել «Վյաչեսլավ Ամիրջանյան» Ա/Ձ-ն և «Արման Սվազյան» Ա/Ձ-ն «ՔՍԻԱՄԵՆ ԻՆՏԵՐՆԵՅՇՆԼ ԲԱՆԿ ԿՈ» ՍՊԸ-ի հետ կոնսորցիումով:

2. «Արման Սվազյան» Ա/Ձ-ն «ՔՍԻԱՄԵՆ ԻՆՏԵՐՆԵՅՇՆԼ ԲԱՆԿ ԿՈ» ՍՊԸ-ի հետ կոնսորցիումով հայտի թիվ 5 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, որի ընդհանուր գինը կազմել է 48 645 000 ՀՀ դրամ:

3. «Արման Սվազյան» Ա/Ձ-ն հայտի թիվ 10 հավելվածին՝ տուժանքի մասին համաձայնագրին կից ներկայացրել է մասնակցության հայտի ապահովման վճարման պահանջագիր, որտեղ հայտի ապահովման գումարի չափը նշել է 2 500 000 ՀՀ դրամ:

4. «ՔՍԻԱՄԵՆ ԻՆՏԵՐՆԵՅՇՆԼ ԲԱՆԿ ԿՈ» ՍՊԸ-ն հայտի թիվ 10 հավելվածին՝ տուժանքի մասին համաձայնագրին կից ներկայացրել է մասնակցության հայտի ապահովման վճարման պահանջագիր, որտեղ հայտի ապահովման գումարի չափը նշել է 2 500 000 ՀՀ դրամ:

5. «Վյաչեսլավ Ամիրջանյան» Ա/Ձ-ն հայտի թիվ 5 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, որի ընդհանուր գինը կազմել է 29 536 728 ՀՀ դրամ:

6. «Վյաչեսլավ Ամիրջանյան» Ա/Ձ-ն հայտի թիվ 10 հավելվածին՝ տուժանքի մասին համաձայնագրին կից ներկայացրել է մասնակցության հայտի ապահովման վճարման պահանջագիր, որտեղ հայտի ապահովման գումարի չափը նշել է 1 476 836 ՀՀ դրամ:

7. «Վյաչեսլավ Ամիրջանյան» Ա/Ձ-ն հայտի թիվ 1 հավելվածում՝ դիմումում և հայտի թիվ 10 հավելվածի՝ տուժանքի մասին համաձայնագրին կից վճարման պահանջագրում հարկ վճարողի հաշվառման համարը նշել է 45149613, իսկ հայտի թիվ 10 հավելվածի՝ տուժանքի մասին համաձայնագրի 3-րդ կետում՝ Ընկերության հասցեն և բանկային վավերապայմանների մեջ նշել է 475149613:

8. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 24.01.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 2.3 ենթակետով կայացված որոշմամբ մերժել է «Վյաչեսլավ Ամիրջանյան» Ա/Ձ-ի հայտը, այն պատճառաբանմամբ, որ վերջինիս կողմից ներկայացված վճարման պահանջագրում հայտի ապահովման չափը պակաս է հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսից, բացի այդ՝ տուժանքի մասին համաձայնագրում մասնակցի ՀՎՀՀ-ն սխալ է նշված:

9.Նույն արձանագրության 4.1 ենթակետով կայացված որոշմամբ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը Ընթացակարգի թիվ 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչել «Արման Սվազյան» Ա/Ձ-ին:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը, ուսումնասիրելով Հովհաննես Դանիելյանի 09.02.2018թ. բողոքը, Վյաչեսլավ Ամիրջանյան Ա/Ձ-ի 23.02.2018թ. համանման բողոքը և ՀՀ պաշտպանության նախարարության 14.02.2018թ. թիվ ԴՎԱ/542 գրությունը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ եթե տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության նախահաշվային գինը չի գերազանցում գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, ապա հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով: Այլ դեպքերում հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ 1-ի 7-րդ կետի 7.1-րդ ենթակետի համաձայն՝ ***Մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսին:*** Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ 1-ի 8-րդ կետի 8.2 ենթակետի համաձայն՝ հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով: ***Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և/կամ հայտի ապահովումը կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:***

«Արման Սվազյան» Ա/Ձ-ն «ՔՍԻԱՄԵՆ ԻՆՏԵՐՆԵՅՇՆԼ ԲԱՆԿ ԿՈ» ՍՊԸ-ի հետ կոնսորցիումով հայտի թիվ 5 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, որի ընդհանուր գինը կազմել է 48 645 000 ՀՀ դրամ:

«Արման Սվազյան» Ա/Ձ-ն հայտի թիվ 10 հավելվածին՝ տուժանքի մասին համաձայնագրին կից ներկայացրել է մասնակցության հայտի ապահովման վճարման պահանջագիր, որտեղ հայտի ապահովման գումարի չափը նշել է 2 500 000 ՀՀ դրամ:

«ՔՍԻԱՄԵՆ ԻՆՏԵՐՆԵՅՇՆԼ ԲԱՆԿ ԿՈ» ՍՊԸ-ն հայտի թիվ 10 հավելվածին՝ տուժանքի մասին համաձայնագրին կից ներկայացրել է մասնակցության հայտի ապահովման վճարման պահանջագիր, որտեղ հայտի ապահովման գումարի չափը նշել է 2 500 000 ՀՀ դրամ:

«Վյաչեսլավ Ամիրջանյան» Ա/Ձ-ն հայտի թիվ 5 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, որի ընդհանուր գինը կազմել է 29 536 728 ՀՀ դրամ:

«Վյաչեսլավ Ամիրջանյան» Ա/Ձ-ն հայտի թիվ 10 հավելվածին՝ տուժանքի մասին համաձայնագրին կից ներկայացրել է մասնակցության հայտի ապահովման վճարման պահանջագիր, որտեղ հայտի ապահովման գումարի չափը նշել է 1 476 836 ՀՀ դրամ:

«Վյաչեսլավ Ամիրջանյան» Ա/Ձ-ն հայտի թիվ 1 հավելվածում՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմումի մեջ և հայտի թիվ 10 հավելվածի՝ հայտի ապահովման տուժանքի մասին համաձայնագրին կից վճարման պահանջագրի մեջ հարկ վճարողի հաշվառման համարը նշել է «***45149613***»:

Միևնույն ժամանակ «Վյաչեսլավ Ամիրջանյան» Ա/Ձ-ն հայտի թիվ 10 հավելվածի՝ հայտի ապահովման տուժանքի մասին համաձայնագրի 3-րդ կետում՝ Ընկերության հասցեն և բանկային վավերապայմանների մեջ նշել է «***475149613***»:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 24.01.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 2.3 ենթակետով կայացված որոշմամբ մերժել է «Վյաչեսլավ Ամիրջանյան» Ա/Ձ-ի հայտը, այն պատճառաբանմամբ, որ վերջինիս կողմից ներկայացված վճարման պահանջագրում հայտի ապահովման չափը պակաս է հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսից, բացի այդ՝ տուժանքի մասին համաձայնագրում մասնակցի ՀՎՀՀ-ն սխալ է նշված:

Նույն արձանագրության 4.1 ենթակետով կայացված որոշմամբ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը Ընթացակարգի թիվ 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչել «Արման Սվազյան» Ա/Ձ-ին:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***Մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի <u>մինչև հինգ տոկոսին</u>:***

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ 1-ի 7-րդ կետի 7.1-րդ ենթակետի համաձայն՝ ***Մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսին:***

Օրենքի 30-րդ հոդվածի 6-րդ մասի 3-րդ ենթակետի համաձայն՝ Մասնակիցները կարող են գնման գործընթացին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Համատեղ գործունեության կարգով գնումների գործընթացին մասնակցության կարգը սահմանվում է հրավերով: Նման դեպքում՝ ***մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն***:

Այսպիսով, վերոգրյալ իրավական հիմնավորումներից ելնելով, Խորհուրդն արձանագրում է, որ «Արման Սվազյան» Ա/Ձ-ի և «ՔՍԻԱՄԵՆ ԻՆՏԵՐՆԵՅՇՆԼ ԲԱՆԿ ԿՈ» ՍՊԸ-ի կոնսորցիումի անդամներից յուրաքանչյուրի կողմից ներկայացված հայտի ապահովման չափը գերազանցում է վերջիններիս կողմից ներկայացված գնային առաջարկի հինգ տոկոսը, քանի որ յուրաքանչյուրի կողմից ներկայացված գնային առաջարկի հինգ տոկոսը կազմում է 2 432 230 ՀՀ դրամ, այլ ոչ 2 500 000 ՀՀ դրամ, ուստի նման պայմաններում Խորհուրդը գտնում է, «Արման Սվազյան» Ա/Ձ-ի և «ՔՍԻԱՄԵՆ ԻՆՏԵՐՆԵՅՇՆԼ ԲԱՆԿ ԿՈ» ՍՊԸ-ի կոնսորցիումի անդամներից յուրաքանչյուրի կողմից «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում ներկայացված հայտի ապահովումը չի համապատասխանում հրավերի պահանջներին, քանի որ չի բավարարում գնային առաջարկի հինգ տոկոսի չափով ներկայացված լինելու պահանջին:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ ***հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:***

Վերոգրյալով պայմանավորված, Խորհուրդը գտնում է, որ Հովհաննես Դանիելյանի և սույն մասով «Վյաչեսլավ Ամիրջանյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված համանման բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման, քանի որ «Արման Սվազյան» Ա/Ձ-ի և «ՔՍԻԱՄԵՆ ԻՆՏԵՐՆԵՅՇՆԼ ԲԱՆԿ ԿՈ» ՍՊԸ-ի կոնսորցիումի հայտը Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի, Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի, ինչպես նաև Ընթացակարգի հրավերի 8-րդ կետի 8.2 ենթակետի համաձայն՝ ենթակա էր մերժման հայտերի բացման նիստում:

Ինչ վերաբերում է «Վյաչեսլավ Ամիրջանյան» Ա/Ձ-ի կողմից համանման բողոքով ներկայացված այն դիտարկմանը, որ «Արման Սվազյան» Ա/Ձ-ի և «ՔՍԻԱՄԵՆ ԻՆՏԵՐՆԵՅՇՆԼ ԲԱՆԿ ԿՈ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացրած վճարման պահանջագրերի մեջ բացակայել է հաշվապահի ստորագրությունը, ինչը հիմք էր «Արման Սվազյան» Ա/Ձ-ի և «ՔՍԻԱՄԵՆ ԻՆՏԵՐՆԵՅՇՆԼ ԲԱՆԿ ԿՈ» ՍՊԸ-ի կոնսորցիումով ներկայացրած հայտը մերժելու համար, ապա սույն մասով Խորհուրդն արձանագրում է հետևյալը.

«Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի համաձայն՝ հաշվապահական հաշվառման փաստաթղթերը ստորագրելու իրավունք ունեցող անձանց շրջանակը որոշում է կազմակերպության ղեկավարը, ընդ որում, կարող է սահմանվել ստորագրության իրավունքի պաշտոնակարգություն՝ կախված տվյալ անձի զբաղեցրած պաշտոնից, գործառնության ոլորտից, էությունից և դրամական արժեքի մեծությունից:

Հրավերին կից տուժանքի մասին համաձայնագրի 1.2 ենթակետի համաձայն՝ որպես մասնակցության հայտի ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնությունը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ «Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների»:

ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 14.10.2016թ. «Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանները և դրանց լրացման կանոնները» հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2004 թվականի մայիսի 20-ի թիվ 131-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 4-ի թիվ 300-Ն, 2015 թվականի հունվարի 13-ի թիվ 2-Ն, 2000 թվականի փետրվարի 1-ի թիվ 18 և 2000 թվականի ապրիլի 25-ի թիվ 97 որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանները և դրանց լրացման կանոնները»-ի (այսուհետ նաև՝ Կանոններ) 5-րդ կետի 1-ին ենթակետի

համաձայն՝ նույն կարգը սահմանում է հետևյալ վճարահաշվարկային փաստաթղթերի նվազագույն վավերապայմանները և դրանց լրացման կանոնները՝

1) վճարահաշվարկային փաստաթղթեր, որոնք պարունակում են կարգադրություն դրամական միջոցները մուտքագրելու, ելքագրելու, վճարելու, փոխանցելու, վճարումը (փոխանցումը) չեղյալ համարելու վերաբերյալ և (կամ) հաստատում (հավաստում) են ծառայությունների մատուցումը և (կամ) գործարքների կատարումը՝

ա. Վճարման հանձնարարական,

բ. Վճարման հանձնարարականը չեղյալ համարելու հանձնարարական,

գ. <u>Վճարման պահանջագիր</u>,

դ. Մուտքի հայտարարություն (մուտքի հայտարարագիր, մուտքի անդորրագիր, մուտքի օրդեր),

ե. Ելքի հայտարարություն (ելքի հայտարարագիր, ելքի անդորրագիր, ելքի օրդեր),

զ. Դրամական միջոցների փոխանցման դիմում (փոխանցման անդորրագիր),

է. Դրամական միջոցների ստացման դիմում (ստացման անդորրագիր),

Կանոնների 22-րդ կետի 1-ին ենթակետի 21-րդ պարբերության համաձայն՝ վճարողի ստորագրությունը հանդիսանում է «Վճարման պահանջագիր» փաստաթղթի նվազագույն վավերապայմանը, որը պարտադիր լրացվում է վճարողի կողմից վճարման պահանջագրի ակցեպտավորման դեպքում:

Ընթացակարգի հրավերով նախատեսված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի» 18.ա կետի համաձայն՝ վճարման պահանջագրի «վճարողի ստորագրությունը» ոչ պարտադիր դաշտը ստորագրվում է վճարողի կողմից:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ «Արման Սվազյան» Ա/Ձ-ի և «ՔՍԻԱՄԵՆ ԻՆՏԵՐՆԵՅՇՆԼ ԲԱՆԿ ԿՈ» ՍՊԸ-ի կոնսորցիումի անդամներից յուրաքանչյուրի կողմից ներկայացված մասնակցության հայտի ապահովման վճարման պահանջագրերի պարտադիր դաշտերը համապատասխանաբար ստորագրվել են «Արման Սվազյան» Ա/Ձ-ի և «ՔՍԻԱՄԵՆ ԻՆՏԵՐՆԵՅՇՆԼ ԲԱՆԿ ԿՈ» ՍՊԸ-ի տնօրենի կողմից, իսկ էլեկտրոնային եղանակով վճարման պահանջագրերը համապատասխանաբար 24.01.2018թ. ժամը 09:29:02-ին և 24.01.2018թ. ժամը 09:28:39-ին ստորագրվել է միայն Արամայիս Աղաջանյանի կողմից:

Միաժամանակ Խորհուրդն արձանագրում է, որ «Արման Սվազյան» Ա/Ձ-ի և «ՔՍԻԱՄԵՆ ԻՆՏԵՐՆԵՅՇՆԼ ԲԱՆԿ ԿՈ» ՍՊԸ-ի կոնսորցիումով ներկայացված հայտին կցվել է 22.01.2018թ. լիազորագրեր՝ համապատասխանաբար տրված «Արման Սվազյան» Ա/Ձ-ի և «ՔՍԻԱՄԵՆ ԻՆՏԵՐՆԵՅՇՆԼ ԲԱՆԿ ԿՈ» ՍՊԸ-ի տնօրենի կողմից, համաձայն որի Արամայիս Դիլգամի Աղաջանյանը լիազորվում է «Արման Սվազյան» Ա/Ձ-ի և «ՔՍԻԱՄԵՆ ԻՆՏԵՐՆԵՅՇՆԼ ԲԱՆԿ ԿՈ» ՍՊԸ-ի կոնսորցիումի կողմից «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/12» ծածկագրով մրցույթին ներկայացվող հավելվածները և անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը հաստատելու էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

ՀՀ ֆինանսների նախարարության 29.03.2017թ. թիվ 04/73-3/5583-17 պարզաբանման համաձայն՝ եթե կազմակերպությունում հաշվապահական հաշվառման ընդհանուր վարումը և ֆինանսական հաշվետվությունների կազմումն իրականացվում է հաշվապահական ծառայության կամ կազմակերպության աշխատակիցը համարվող հաշվապահի միջոցով, ապա տուժանքի մասին համաձայնագիրը գլխավոր հաշվապահի մասով պետք է էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատվի համապատասխանաբար հաշվապահական ծառայության ղեկավարի կամ հաշվապահի կողմից, իսկ տնօրենի մասով՝ տնօրենի կողմից:

Միևնույն ժամանակ նույն պարզաբանումը սահմանում է, որ եթե հաշվապահական հաշվառումը վարվում է կազմակերպության ղեկավարի կողմից անձամբ, ապա տուժանքի մասին համաձայնագիրը ներկայացվում է առանց գլխավոր հաշվապահի ստորագրության: Ընդ որում, եթե տուժանքի մասին համաձայնագիրը ներկայացվել է միայն կազմակերպության ղեկավարի ստորագրությամբ, ապա մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, նկատի ունենալով, որ տվյալ դեպքում հաշվապահական հաշվառումը վարվում է կազմակերպության ղեկավարի կողմից անձամբ:

Ելնելով վերոգրյալից, Խորհուրդը գտնում է, որ «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի» 18.ա կետի համաձայն՝ վճարման պահանջագրի «վճարողի ստորագրությունը» պարտադիր դաշտը համապատասխանաբար «Արման Սվազյան» Ա/Ձ-ի և «ՔՍԻԱՄԵՆ ԻՆՏԵՐՆԵՅՇՆԼ ԲԱՆԿ ԿՈ» ՍՊԸ-ի տնօրենի կողմից ստորագրված լինելու փաստը բավարար հիմք է հանդիսանում, ուստի սույն հիմքով «Արման Սվազյան» Ա/Ձ-ի և «ՔՍԻԱՄԵՆ ԻՆՏԵՐՆԵՅՇՆԼ ԲԱՆԿ ԿՈ» ՍՊԸ-ի կոնսորցիումի հայտը ենթակա չէ մերժման:

Ինչ վերաբերում է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 24.01.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 2.3 ենթակետով կայացված որոշմամբ «Վյաչեսլավ Ամիրջանյան» Ա/Ձ-ի հայտը մերժելուն, այն պատճառաբանմամբ, որ վերջինիս կողմից ներկայացված վճարման պահանջագրում հայտի ապահովման չափը պակաս է հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսից, ապա սույն մասով Խորհուրդը գտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը գործել է իրավաչափ, հետևյալ հիմնավորմամբ.

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***Մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին:***

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ 1-ի 7-րդ կետի 7.1-րդ ենթակետի համաձայն՝ ***Մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսին:***

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ ***հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:***

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ***բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան***, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

«Վյաչեսլավ Ամիրջանյան» Ա/Ձ-ն հայտի թիվ 5 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, որի ընդհանուր գինը կազմել է 29 536 728 << դրամ:

«Վյաչեսլավ Ամիրջանյան» Ա/Ձ-ն հայտի թիվ 10 հավելվածին՝ տուժանքի մասին համաձայնագրին կից ներկայացրել է մասնակցության հայտի ապահովման վճարման պահանջագիր, որտեղ հայտի ապահովման գումարի չափը նշել է 1 476 836 ՀՀ դրամ:

Այսպիսով, վերոգրյալ իրավական հիմնավորումներից ելնելով, Խորհուրդն արձանագրում է, որ «Վյաչեսլավ Ամիրջանյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտի ապահովման չափը պակաս է ներկայացված գնային առաջարկի հինգ տոկոսից, քանի որ «Վյաչեսլավ Ամիրջանյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված գնային առաջարկի հինգ տոկոսը կազմում է 1 476 836,4 ՀՀ դրամ, այլ ոչ 1 476 836 ՀՀ դրամ, ուստի նման պայմաններում Խորհուրդը գտնում է, «Վյաչեսլավ Ամիրջանյան» Ա/Ձ-ի կողմից «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում ներկայացված հայտի ապահովումը չի համապատասխանում հրավերի պահանջներին, քանի որ չի բավարարում գնային առաջարկի հինգ տոկոսի չափով ներկայացված լինելու պահանջին:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ «Վյաչեսլավ Ամիրջանյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված համանման բողոքը սույն մասով հիմնավոր չէ և ենթակա է մերժման, քանի որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, մերժելով «Վյաչեսլավ Ամիրջանյան» Ա/Ձ-ի հայտը, գործել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների պահպանմամբ:

Ինչ վերաբերում է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 24.01.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 2.3 ենթակետով կայացված որոշմամբ «Վյաչեսլավ Ամիրջանյան» Ա/Ձ-ի հայտը մերժելուն, այն պատճառաբանմամբ, որ վերջինիս կողմից տուժանքի մասին համաձայնագրում մասնակցի ՀՎՀՀ-ն սխալ է նշված, ապա սույն մասով Խորհուրդն արձանագրում է հետևյալը.

«Վյաչեսլավ Ամիրջանյան» Ա/Ձ-ն հայտի թիվ 1 հավելվածի՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմումի մեջ և հայտի թիվ 10 հավելվածի՝ հայտի ապահովման տուժանքի մասին համաձայնագրին կից վճարման պահանջագրի մեջ հարկ վճարողի հաշվառման համարը նշել է «***45149613***»:

Միևնույն ժամանակ «Վյաչեսլավ Ամիրջանյան» Ա/Ձ-ն հայտի թիվ 10 հավելվածի՝ հայտի ապահովման տուժանքի մասին համաձայնագրի 3-րդ կետում՝ Ընկերության հասցեն և բանկային վավերապայմանների մեջ նշել է «***475149613***»:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ 2-ի 1-ին կետի 1.2 ենթակետի համաձայն՝ նպատակահարմարության դեպքում մասնակիցը պահանջվող տեղեկությունները կարող է ներկայացնել սույն հրահանգով առաջարկվող ձևերից տարբերվող՝ այլ ձևերով՝ պահպանելով պահանջվող վավերապայմանները:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ «Վյաչեսլավ Ամիրջանյան» Ա/Ձ-ն հայտի թիվ 10 հավելվածի՝ հայտի ապահովման տուժանքի մասին համաձայնագրի 3-րդ կետում՝ Ընկերության հասցեն և բանկային վավերապայմանների մեջ հարկ վճարողի հաշվառման համարը նշել է սխալ:

Այս տեսանկյունից անհրաժեշտ է նշել, որ Կարգի 41-րդ կետով նախատեսված՝ հայտում արձանագրված անհամապատասխանությունը շտկելու հնարավորությունը տվյալ դեպքում չի գործում, քանի որ Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի ուժով հրավերի պահանջներին անհամապատասխան ներկայացված հայտի ապահովման դեպքում հայտը ենթակա է մերժման, ուստի սույն մասով ևս Խորհուրդը գտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, մերժելով «Վյաչեսլավ Ամիրջանյան» Ա/Ձ-ի հայտը, գործել է իրավաչափ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հովհաննես Դանիելյանի կողմից ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 09.02.2018թ. ներկայացված բողոքը բավարարել՝ պարտավորեցնել ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովին դադարեցնելու «ԱՐՄԱՆ ՍՎԱՋՅԱՆ» Ա/Ձ-ին/ կոնսորցիում «ՔՍԻԱՄԵՆ ՕՐԳԱՆԻԿ ՖՈՒԴ ԿՈ» ՍՊԸ/ ընթացակարգի թիվ 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ չափաբաժիններով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին որոշումը:

2. Վյաչեսլավ Ամիրջանյան Ա/Ձ կողմից ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 23.02.2018թ. ներկայացված բողոքը բավարարել մասնակի, մասնավորապես՝

ա) ՀՀ պաշտպանության նախարարության կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.01.2018թ. թիվ 4 արձանագրության 2.3 կետով Վյաչեսլավ Ամիրջանյան Ա/Ձ-ի հայտը մերժելու մասին որոշումը դադարեցնելու վերաբերյալ պահանջի մասով բողոքը մերժել:

բ) պարտավորեցնել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնելու 24.01.2018թ. թիվ 4 արձանագրության 4.1 կետով «ԱՐՄԱՆ ՍՎԱՋՅԱՆ» Ա/Ձ-ին ընթացակարգի 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին որոշումը:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ